խաղրուելով թեմական դպրանոցի՝ այն բարոյական վնասը կը լինի Զամախեցւոց և դաւառի Հայ ժողովրդոց, որ հազիւ թէ մի քանի կարող ընտանիք կարողանան որդիք ուղարկել ի Բաղու ուսանելոյ թեմական դպրոցումն։ Այս առարկայի մասին մնաց դարձեալ խորհելու Բաղուեցւոց հետ։[1])

3. Զամախւոյ թեմի քարոզչի խնդիրն՝ որոյ համար 1888 թուի յունվարի 3ին հմ. 1. գրել էի Մարդասիրական ընկերութեան խորհրդին, որ հոգայ ընկերութիւնն քարոզչի պետքին՝ վճարելով ի տարին մի հազար ռուբլի դրամ, որով որպէս զի՝ կարողանանք մի քարոզիչ հրաւիրել հրամանաւ Վեհ. Կաթուղիկոսի միջոցաւ Սինոդի, որոյ համար և գրել եմ Սինոդին ի 15 դեկտ. 1887 թիւ հմ. 190, և ի 20 յունվարի 1889 հմ. 15 և խնդրել եմ շնորհ առնելով Զամախւոյ թեմի Հայ ժողովրդոց՝ տնօրինել ուղարկել մի քարոզիչ վարդապետ, և յուսով եմ, որ Սինոդը կը տնօրինէ զարժանն, ինչպէս ի 28 դեկտեմբերի 1889 ամի հմ. 896։ Հրամանագրի մէջ յուսադրում է։ Քարոզչի պէտքն ու պահանջը բացատրելու համար գրում եմ այստեղ միայն յանուն Մարդասիրական ընկերութեան խորհրդին գրած հրաւիրագրոյս պատճէնը, որից կարդացողը կարող է պարզ իմանալ՝ թէ ինչ է ստիպում յատուկ քարոզիչ հրաւիրել Զամախի քաղաքի և դաւառի ժողովրդոց համար։ Ահա այն գրութեան օրինակը։

,, Ի խորհրդարանն բարձրագոյն հաստատեալ Մարդասիրական ընկերութեան Հայոց Բաղուայ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։

,, Զատ տարիներից հետէ լսելով և զանազան գրուածոց մէջ կարդալով Բաղուայ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հիմնուած և բարձրագոյն հաստատուած Մարդասիրական ընկերութեան անունը և նորա զանազան ժամանակներում ցոյց տուած ազգի ազգի բարեգործութեանց համբաւներն, որ միակ

---

[1]) Թեմական դպրանոցի ի Բաղու փոխադրելոյ համար յայտարարութեամբս ի 20 դեկտ. 1893 ամի. հմ. 415. խնդրել եմ Վեհ. Կաթուղիկոսի տնօրէնութիւնն։